զզաւուխն և սարբխն եասախ արարեալ. եւ զոլ թա-
յին արարեալ՝ թէ յո՛ր տեղ գտանէ էշխիա մարդ եւ
շէռիր՝ գանեսցէ բազումս և կամ ո՛վ ոք յետ եաթ-
սուին գտանի դուրս ի տանէն՝ ըմբռնեալ սպանցէ բըռ-
նաւորն։

Դշի (30 Դեկտ.). պահք Ցայտնութեան Տեառն։

Դշի (31 Դեկտ.). թագաւորն թէպտիլ շուրջ եկաւ
ի քաղաքս։

Աւուրքս Աստուածատուր վարդապետն ի Սուրբ
Նիկողոս եկն։ Երեկոյիս Գաբրիէլ վարդապետն եկն
յէջմիածնայ և ի խանն մեր իջաւ։

(ՌՃԶ = 1657)

Յունվար ամիս օր Եշի։

Ուրբաթս (2 Յոնուար) թագաւորն խիլայեաց ըզ-
դեսպանն Պարսից և ետ հրաման երթալ առ տէրն իւր։

Շաբաթ (3 Յոնուար). կաթողիկոսն ի Սուրբ Աս-
տուածածին ժողով արար Զ եկեղեցով հանդերձ եւ
ձայնեաց զԳաբրիէլ վարդապետն անդ, եւ զբերեալ
թուղթն կարդալ ետուր (Ռեբէ)։

Դշի (6 Յոնուար). Ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի։ Զհացն ի Մինասենցն կերաք եւ անտի ի
Մղսոնցն գնացաք և երեկոյիս Տէրտէրն ի Սուրբ Նի-
կողոս գնացեալ և զԱյսմաւուրն ընթերցեալ։ Եւ գը-
նացաք երեկոյիս ի Կիւրղենցն։

Դշի (7 Յոնուար). երեկոյիս ի Դաւթենցն պատիւ։

Եշի (8 Յոնուար). երեկոյիս ի Խանումենց փուռն
պատիւ և աւրհնել։